



## ԻՐԻՆԱ ՄԵՅՐԱՆՅԱՆ

**ՀՂՀ ընդհանուր իրավասության առաջին ապյանի  
դատարանի դատավորի օգնական**

## ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ



Սեփականության իրավունքի հասկացությունը բացահայտելու համար նախ անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ է իրենից ներկայացնում սեփականությունը:

«Սեփականություն» եզրույթը ծագել է հռոմեական «dominium» բառից, որն էլ իր հերթին առաջացել է «domare»՝ զարդարել, նվաճել բառից: Գոյքը, որի նկատմամբ գոյություն էր ունեցել սեփականության իրավունքը, կոչվել է «proprietas»: Հետևաբար սխալ չէր լինի համարել «proprietas»-ը «dominium»-ի հոմանիշը:

Սեփականությունը պատկանում է այն հասկացությունների թվին, որոնց շուրջ դարերի ընթացքում առաջ են քաշվել մարդկության լավագույն մտահղացումները: Սոցիալական բախումների կարևորագույն պատճառներից մեկն էլ կայանում է հենց գոյություն ունեցող սեփականության հարաբերությունների փոփոխման փորձերի մեջ, որոնք փորձում էին նոր ուժ հաղորդել այդ հարաբերություններին:

Սակայն այդ փորձերը մի դեպքում տանում էին դեպի հաջողություն, իսկ մեկ այլ դեպքում՝ դեպի կործանում:

Սեփականության ծագման հիմքը հանդիսանում է յուրացումը: Մարդու նյութական ապահովածությունը հնարավոր է միայն յուրացման շնորհիվ, այսինքն՝ մարդու իր պահնջմունքները բավարարելու համար բնությունից վերցնում էր նյութական բարիքներ: Նախնադարյան ժամանակաշրջանում յուրացման համար գոյուրյուն էր ունեցել համապատասխան տարածք՝ որպես տոհմի բնակության վայր: Պարզ է, որ այն ժամանակ գոյուրյուն ունեցող յուրացման ձևով տոհմի մեկ անդամը չէր կարող միայնակ այլ տոհմերից զավթել խոշոր տարածքներ կամ որսալ մեծ կենդանիներ: Այդ աշխատանքը պահանջում էր համատեղ ուժ, և անհրաժեշտություն է առաջանալ, որպեսզի յուրացումը կատարվի կողեկտիվ կերպով: Այստեղից էլ տարբերում են սեփականությունը որպես անհատի կամ կողեկտիվի վերաբերմունքը իրեն պատկանող գույքի նկատմամբ՝ որպես իր սեփականը:

Յուրացման տնտեսական հարաբերությունները հանդես են գալիս տարբեր ձևերով, անկախ այն բանից, թե ով է հանդիսանում նրա սուբյեկտը՝ անհատը, կողեկտիվը, պետությունը, թե՝ համայնքը: Դրա համաձայն էլ ստվարաբար տարբերում են անհատական, կողեկտիվ, համայնքային, այդ բվում նաև հասոր յուրացում: Յուրացման այս տնտեսական ձևերը ընդունված է անվանել սեփականության ձևեր: Այստեղից էլ հետևում է, որ սեփականության ձևերն իրենցից ներկայացնում են տնտեսական, այլ ոչ թե իրավական կատեգորիա:

Սեփականությունը, որպես տնտեսական



## ԼՂՀ դատական իշխանություն

Կատեգորիա, առաջացել է մարդկային հսկարակության հետ մեկտեղ և նրա զարգացումը անցել է երկարատև պատմական ուղի: Մեփականության մասին Հեգելի փիլիսոփայական գիտությունը նշանակալի փուլ է հանդիսացել գիտության զարգացման մեջ: Հեգելը մարդուն դիտում է որպես իրեն պատկանող սեփականության հետ անբաժանելի անձ: Ըստ Հեգելի, ցանկացած մարդու, քաղաքացու սեփականությունը հանդիսանում է նրա ազատության, հնարավորությունների զարգացման նախապայմանը:<sup>1</sup> Հեգելը մարդու ազատությունների իրականացման մեջ իրավունքի և պետության դերը ցոյց է տալիս սեփականության միջոցով: Նրա կարծիքով սեփականության նկատմամբ անձի իրավունքը տրվում է ծննդյան պահից և չի կարող նրանից բաժանվել: Հեգելյան փիլիսոփայության տեսական կառուցվածքում «ազատություն», «իրավունք» և «սեփականություն» կատեգորիաների կենտրոնում մարդն է: Խորհրդային շրջանի տնտեսական գիտությունը, ի տարրերություն իրավաբանականի, ուշադրություն չի դարձել սեփականության հարաբերություններին:

Դեռևս 18-րդ դարի վերջին անգլիացի փիլիսոփա Ջոն Լոքը հայտարարել է մարդու անկապտելի իրավունքների սրբազն անձեռնախելության մասին, որոնցից կարևոր են կյանքի, ազատության և սեփականության իրավունքները:<sup>3</sup> Ավելի ուշ, 1776թ. ԱՄՆ-ի «Անկախության հոչակագիրը» և ֆրանսիական մեծ հեղափոխությունը՝ հրապարակելով իրենց հոչակագիրը՝ «ազատություն», «հավասարություն», «եղայրություն», «արդարություն», աճրապնդել են մարդկանց մեջ համամարդկային արժեքների նկատմամբ հավատը:<sup>4</sup> Գերմանական փիլիսոփա Հեգելը մասնավոր սեփականությունը համարել է սոցիալական արդարության սոցիալ-տնտեսական բովանդակության արտահայտում: Հեգելի մտածելակերպով՝ սեփականությունը հանդիսանում է ազատության անբաժանելի մասը, այսուղից էլ հետևում է, որ արդարությունը հնարավոր է միայն մասնավոր սեփականության առկայության դեպ-

րում: Նշված արժեքները ամբողջական տեսքով արտահայտվել են 1948թ. «Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրում» և 1966թ. «Մարդու իրավունքների միջազգային պակտերում»՝ դառնարով համաշխարհային հանրության կողմից ճանաչված ընդհանուր նորմ: Կայիշոռնիայի համալսարանի պրոֆեսոր Գորդիի կարծիքով, սեփականության իրավունքը նույնացվում է մարդու իշխանության «ինքն իր նկատմամբ՝ իր արարքներով և իր ազատությամբ» հետ:<sup>5</sup> Այլ խոսքերով, սեփականության իրավունքի պաշտպանությունն ազատության պաշտպանությունն է, իսկ սեփականության իրավունքի սահմանափակում՝ ազատության սահմանափակում է: Այս սկզբունքի ի հայտ գալը մենք կարող ենք դիտարկել Ուուսաստանում պետության և հասարակության պատմական զարգացման օրինակի վրա. Եթե մարդկանցից վերցրել են նրանց սեփականությունը, դրա հետ մեկտեղ նրանցից վերցրել են նաև նրանց ազատությունը: Եթե մարդիկ նորից ձեռք են բերել մասնավոր սեփականությունը, նրանք ձեռք են բերել նաև ազատություն: Այդպես է եղել Ուուսաստանում և՝ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, և՝ 20-րդ դարի 90-ական թվականներին:

Զ. Ա. Բերբեչկինի կարծիքով, արդարությունը դիտվում է որպես այսպես կոչված համամարդկային կարգ, որը ապահովում է հասարակության մեջ մարդու և քաղաքացու գոյությունը և անվտանգությունը:<sup>6</sup> Համաձայն Վերենչկինի կարծիքի հետ, գտնում ենք, որ արդարությունը հանդիսանում է ցանկացած հասարակության անբաժանելի մասը, իսկ ժողովրդավարական հասարակությունում հանդիս է գալիս որպես բարձրագույն հասարակական արժեք:

Զբաղվելով սեփականության իրավունքի հիմնահարցերով, տեղին է անդրադառնալու փիլիսոփա Բ. Չիշերինի դիրքորոշմանը, որը մերժում է մասնավոր սեփականության ցանկացած սահմանափակում: Բ. Չիշերինը նաև կարծել է, որ հանուն պետության անձնական սեփականության միավոր խարիսխում է մարդու ազատության հիմքերը:<sup>7</sup>



Մարդու գոյության համար անհրաժեշտ նյութական բարիքների հիմնական արբյուրներից մեկը հանդիսանում է հասարակական արտադրության գործընթացը: Քանի որ հասարակական արտադրությունը նախատեսվում է աշխատանքի բաժանում, նրա սուբյեկտները մտնում են արտադրական բնույթի համապատասխան հարաբերությունների մեջ:

Չի կարելի «սեփականություն» հասկացությունը նույնացնել «գույք» և «իր» հասկացությունների հետ: Ենչպես գրել է Մարքսը, սեփականությունը դա կոնկրետ անձանց հարաբերությունն է նյութական բարիքների նկատմամբ՝ որպես իրենցը, իրենց պատկանող, և դրան համապատասխան մնացած բոլոր անձանց հարաբերությունը նշված բարիքների նկատմամբ որպես ուրիշներ, որը չի պատկանում իրենց:

Սեփականությունը, որպես հասարակական կատեգորիա, միշտ կապված է անձի հետ: Նիկիտինյայի կարծիքով սեփականությունը իրենից ներկայացնում է իրերի վերաբերյալ մարդկանց միջև հարաբերությունները:<sup>8</sup> Պայմովը նույնպես կարծում է, որ իրավական նշանակություն կարող են ծեռք բերել միայն քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջև հարաբերությունները<sup>9</sup>:

Մարքսը, որպես տնտեսական կատեգորիա, սեփականության հասկացության բացահայտման համար օգտագործել է «յուրացում» հասկացությունը:<sup>10</sup> Յուրացումը իրենից ներկայացնում է հասարակական հարաբերություններ, որոնք ծագում են մարդկանց միջև նյութական բարիքների արտադրման և փոխանակման պյողեսում:

Տնտեսական առումով՝ սեփականությունն իրենից ներկայացնում է նյութական բարիքների յուրացման հարաբերություններ: Սեփականության հարաբերությունների տնտեսական բովանդակությունը բնուրագվում է երկու հիմնական ասպեկտներով:

-գույքի նկատմամբ տնտեսական գերիշխանությամբ, որը հնարավորություն է տալիս սեփականատիրոջը իր հայեցողությամբ և որն է մեկի կամքից անկախ օգտագործել իրեն

պատկանող նյութական բարիքները եկամուտների ստացման կամ պահանջմունքների բավարարման նպատակով, այդ ընթացքում դրամից մնելուսացներվ բոլոր այլ անձանց:

- սեփականության ծանրաբեռնվածությամբ, որը կայանում է ապրուստի համար ծախսերի կատարման, գույքի նորոգման և պահպանման, հարկերի վճարման անհրաժշտության մեջ, այդ թվում ոչ լիարժեք և ճիշտ տնտեսավարության դեպքում հնարավոր կորուստների դիսկի մեջ:

Սուխանովը, բացահայտելով սեփականության հարաբերությունների տնտեսական բովանդակությունը, օգտագործում է երկու կատեգորիաներ՝ «բարիք» և «ծանրաբեռնվածություն»:<sup>11</sup> «Հաճելի բարիք» ասելով նա նկատի ունի սեփականատիրոջ հնարավորությունը՝ ստանալ եկամուտներ և բավարարել իր պահանջմունքները, իսկ «սեփականության ծանրաբեռնվածություն» ասելով հասկանում է ապրուստի համար ծախսերի կատարման, գույքի նորոգման, պահպանման անհրաժշտությունը, այդ թվում՝ դրա կորուստի ոփսկը:

Տնտեսական իմաստով յուրացման սուբյեկտ կարող է հանդիսանալ նաև կոլեկտիվը, բայց քաղաքացիական իմաստով սեփականատեր է դառնում իրավաբանական անձը: Հետևաբար՝ տնտեսական և իրավական հարաբերությունների սուբյեկտները ոչ միշտ են համընկնում:

Անհրաժշտ պայման է սեփականության բոլոր ծեռի հավասարությունը, որի տակ հասկացվում է իրավասությունների հավասարություն, որոնք տրվում են յուրացման տարբեր սուբյեկտներին: Անհրաժշտ է սակայն ընդգծել, որ այդ պահանջը ևս կրում է տնտեսական, այլ ոչ թե իրավական բնույթը, քանի որ ապահովել սեփականության բոլոր ծեռի հավասարությունն իրավական առումով ուղղակի անհնար է: Դրա մասին է վկայում այն, որ պետության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք, այդ թվում նաև շրջանառությունից հանված գույքը: Պետությունը կարող է գույքը որպես սեփականություն ծեռք բերել առգրավման, բռնագ-



## ԼՂՀ դատական իշխանություն

րավման և այլ եղանակներով, որոնցից զրկված են քաղաքացիները և իրավաբանական անձինք: Մյուս կողմից է՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք, ընդհանուր կանոնի համաձայն, իրենց պարտավորությունների համար պատասխանատու են իրենց պատկանող գույքով, բացառությամբ այն գույքի, որի վրա, օրենքին համապատասխան, բռնագանձում չի տարածվում: Այդ պատճառով էլ օրենքի մեջ նշվում է հավասար պաշտպանության, բայց ոչ սեփականության տարրեր ծների հավասարության մասին:

Սեփականության հարաբերությունները, մեր համոզմամբ, չեն կարող կարգավորվել «վատ» կամ «միջին» օրենքներով: Օրենսդրությունը սեփականության վերաբերյալ կարող է լինել միայն իմաստուն, որպեսզի մեզ շպատճառի անուղղելի վնասներ:

Սեփականությունը, որպես տնտեսական կատեգորիա, ուղեկցել է մարդկությանը նրա պատմության ողջ ընթացքում, բացառությամբ այն սկզբնական շրջանների, երբ մարդը դեռևս չէր առանձնացել բնությունից և իր պահանջմունքները բավարարել են յուրացման այնպիսի հասարակ միջոցներով, ինչպիսիք են՝ տիրապետումը և օգտագործումը: Ընդունված է տարրերել նախնադարյան-համայնական, սորկատիրական, ավատատիրական-նորտատիրական և կապիտալիստական սեփականության տիպերը: Մինչև վերջերս առանձնացրել էին նաև սոցիալիստականը՝ որպես սեփականության առանձնահատուկ տեսակ: Սեփականության նշված տեսակները հանդիսանում են աշխատանքի հասարակական բաժանման տարրեր աստիճանները: Աշխատանքի հասարակական բաժանման յուրաքանչյուր աստիճանի բնորոշ է սուրյեկտների սահմանված հարաբերությունները միջյան նկատմամբ, այդ բիում նաև գույքի և արտադրության միջոցների նկատմամբ նրանց հարաբերությունը:

Հայտնի տնտեսագետ Շկրեդովը գտնում է, որ սեփականությունը, որպես հասուլ տնտեսական կատեգորիա, զոյլություն չունի և նրա մասին խոսք կարող է գնալ միայն որպես իրավական կատեգորիա: Այսպիսի եզրակա-

ցության հիմք հեղինակի համար հանդիսացել է այն, որ սեփականությունը արտահայտվում է արտադրական հարաբերությունների ողջ համակարգում, այդ պատճառով էլ տարրերն են՝ որպես ինքնուրույն տնտեսական կատեգորիա, իբր թե անհնար է: Սեփականության հանդես գալն արտադրական հարաբերությունների ողջ համակարգում կասկածանքի տեղիք չի տալիս: Բայց հենց դրա համար էլ ապացուցված է սեփականության առանձնացումն այլ համակարգից: Միայն այս ճանապարհով է հնարավոր պարզել սեփականության էությունը:

Մինչև այժմ խոսել ենք սեփականության՝ որպես տնտեսական կատեգորիայի մասին, որն էլ պետք է հիմք հանդիսանա սեփականության իրավական բովանդակության պարզաբանման համար: Եթե սեփականությունը, որպես տնտեսական կատեգորիա, առաջացել է մարդկության ծնավորման առաջին խև օրվանից, ապա սեփականությունը՝ որպես իրավական կատեգորիա, առաջացել է պետության և իրավունքի ծնավորման հետ միասին: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածը սահմանում է, որ սեփականության իրավունքը սուրյեկտի՝ օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված և պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը:

Սեփականության իրավունքի ինստիտուտը կոչված է կարգավորելու նյութական բարիքների պատկանելիության հարաբերությունները: Իրոք, անհրաժեշտ է ոչ միայն սահմանել քաղաքացիների և իրավաբանական անձանց մասնավոր սեփականությունը՝ առաջարկելով նրանց՝ սեփականատիրոջը պատկանող իրավասություններ և իրավունքների սահմանափակման ընդհանուր կանոն, այլ նաև անհրաժեշտ է դրան համապատասխան նշել իրավունքի կոնկրետ նորմեր, որոնք պատասխանում են սեփականատիրոջ առօրյա կյանքում առաջացող բազմաթիվ հարցերին: Սեփականատերն իր գույքին վերաբերում է որպես իր սեփականը, իսկ մյուսները վերաբերում են որպես ուրիշինը: Սեփակա-



նատերը իր գույքի նկատմամբ օժտված է իրավասուրյամբ, դրա հետ մեկտեղ այդ իրավասուրյունը սահմանափակվում է օրենքով՝ ելնելով այլ անձանց շահերից: Անխոսափելիորեն սրա հետ կապված կոնֆիլկտ է առաջանում հարևանների միջն, օրինակ՝ հողամասերի, տների սեփականատերերի միջև: Այս նշված սեփականատերերը իրավասու են և միաժամանակ սահմանափակ՝ իրենց իրավասուրյան մեջ: Ո՞վ կարող է նշված սուրյեկտներին օգնել քաղաքացիակիրավական հարաբերություններում լուծել այս կոնֆիլկտը: Նման դեպքերում, իհարկե, որպես առաջին խորհրդատու կարող է հանդես գալ օրենքը:

Պետությունը պաշտպանում է սեփականության իրավունքը, միաժամանակ պարտավորեցնելով այլ անձանց չխոչընդոտել սեփականության իրավունքի իրականացմանը: ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածն ամրագրում է, որ սեփականության իրավունքի իրականացմանը չպեսոք է խախտի այլ անձանց իրավունքները և ազատությունները, վնաս պատճառի շրջակա միջավայրին, հանրային շահերին: ԼՂՀ Սահմանադրության 9-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ծների ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը: Սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ իր հայեցողությամբ կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն և օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ բնույթ իր գույքը՝ որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ հանձնել այլ անձանց հավատարմագրային կառավարմանը: Դա նշանակում է, որ սեփականատերն իրեն պատկանող գույքի նկատմամբ կարող է կատարել ցանկացած գործողություն, որը արգելված չէ օրենքով: Այս ամենից էլ բխում է, որ սեփականության իրավունքը կրում է բացառիկ բնույթ:

Սեփականության իրավունքը հասկաց-

վում է երկու իմաստով՝ օբյեկտիվ և սույնեկտիվ: Սեփականության իրավունքը ինչպես լայն, այնպես էլ նեղ իմաստով իր մեջ ներառում է անձնական և սոցիալական տարրեր: Մի կողմից սեփականության իրավունքը որպես իրավունքի ինստիտուտ, սահմանափակում է սեփականատիրոջ ազատությունը՝ ելնելով հասարակության շահերից, մյուս կողմից՝ այն սեփականության իրավունքի սույնեկտիվ ընձեռում է ազատությունների որոշակի որոշում, որոնց չեն կարող ուժնագել հասարակության մյուս անդամները: Դրանից ելնելով սեփականության իրավունքը կարելի է դիտել որպես՝

- իրավական նորմերի հավաքածու, որը ընձեռում և դրա հետ մեկտեղ սահմանափակում է սեփականատիրոջ ազատությունը,

- ազատություն, որը ընձեռվում և սահմանափակվում է իրավունքի նորմերով:

Առաջին դեպքում խոսքը վերաբերում է օբյեկտիվ սեփականության իրավունքն, իսկ երկրորդ դեպքում՝ սույնեկտիվ իմաստով սեփականության իրավունքին: Օբյեկտիվ իմաստով՝ սեփականության իրավունքը իրենից ներկայացնում է իրավական նորմերի ամրողություն, որոնք ամրապնդում, կարգափորում և պահպանում են սեփականության հարաբերությունները: Սեփականության հարաբերությունները կարգավորող իրավունքի նորմերը ունեն մի քանի գործառույթներ: Առաջին հերթին, ցանկացած նորմ սեփականատիրոջը հնարավորություն է տալիս ինչ-որ քան կատարել կամ արգելում է այն կատարել, պարտավորեցնում է նրան հեռու մնալ սեփականության օբյեկտների նկատմամբ որևէ գործողություն կատարելուց: Գոյություն ունեն նորմեր, որոնք սեփականատիրոջն ինչ-որ լրացուցիչ, ինքնուրույն իրավունքներ չեն ընձեռում: Այդպիսի օրենսդրական ակտերը արգելում կամ սահմանափակում են սեփականության հարաբերությունները կարգավորող նորմերը.<sup>12</sup>

Վասկովսկին առանձնացնում է սեփականության իրավունքի օրինական սահմանափակումների երկու խումբ:

- սահմանափակումներ, որոնք սեփակա-



## ԼՂՀ դատական իշխանություն

նատիրոջը գրկում են նրան պատկանող որոշ իրավասություններից,

- սահմանափակումներ, որոնք սեփականատիրոջ գործողությունները ենթարկում են հասարակական իշխանության մարմինների կողմից հսկողության:

Նրա կարծիքով, առաջին խմբի սահմանափակումները վերաբերում են քաղաքացիական իրավունքին, քանի որ դրանք բացահայտում են սեփականության իրավունքի բովանդակությունը: Երկրորդ խմբի սահմանափակումները, որոնք իրենցից ներկայացնում են իրականում միայն իրավական պարտականություններ սեփականատիրոջ նկատմամբ, որոնք նախատեսված են օրենքով, քաղաքացիական իրավունքի հետ կապ չունեն և ուսումնասիրվում են հանրային իրավունքում:<sup>13</sup> Մեր կարծիքով, սեփականության իրավունքի օրինական սահմանափակումները հասարակական շահերի պաշտպանության նպատակով չեն կարող բացառապես վերաբերել միայն հանրային իրավունքին, քանի որ դրանք իրենց մեջ ներառում են հանրային և մասնավոր իրավունքի տարրեր:

Օրենքի իմաստով սեփականության իրավունքն իրավական նորմերի ամրողություն է, որոնց մեծ մասը ունենալով բաղաքացիափական բնույթ, մտնում են գույքային իրավունքի ճյուղի մեջ: Սեփականության իրավունքի ինստիտուտի մեջ մտնում են ոչ միայն քաղաքացիափական նորմերը, այլև իրավունքի բոլոր նորմերը, որոնք ամրապնդում, կարգադրում և պաշտպանում են կոնկրետ անձանց պատկանող նյութական բարիքները: Սեփականության իրավունքի ինստիտուտը նախ և առաջ կարգավիրտվում է սահմանադրական իրավունքի նորմերով, այդ թվում՝ քաղաքացիական իրավունքի համապատասխան նորմերով, որով աշխատանքային իրավունքի նորմերով, և նույնիսկ որոշ քրեափակական կանոններով: Այսինքն՝ սեփականության իրավունքն օրենքի իմաստով իրենցից ներկայացնում է ոչ թե քաղաքացիափական, այլ իրավունքի համալիր ինստիտուտ, որի մեջ, այնուամենանիվ, կենտրոնական տեղը գրանցնում են քաղա-

քացիափակական նորմերը:

Սուրբեկտիվ իմաստով սեփականության իրավունքի տակ պետք է հասկանալ ազատության արտաքին ոլորտը, որը տրվում է սեփականատիրոջն օրյեկտիվ իրավունքի նորմերով: Նշված ոլորտում սեփականատերն իրավունք ունի տիրապետել, օգտագործել և տնօրինել գույքն իր հայեցողությամբ: Սուրբեկտիվ իմաստով սեփականության իրավունքը, ինչպես և յուրաքանչյուր սուրբեկտիվ իրավունք, օրենքով իրավասու անձին տրված որոշակի վարքագիր դրսուրման հնարավորությունն է: Այս տեսանկյունից այն իրենցից ներկայացնում է իր բովանդակությամբ ավելի լայն գույքային իրավունք, որը տալիս է հնարավորություն սեփականատիրոջը (և միայն նրան), որոշելու իրեն պատկանող գույքի ճակատագիրը:

Սեփականության իրավունքը հանդիսանում է գույքային իրավունքներից մեկը: Մինայսկին գրել է, որ այն կարող է որոշվել երկու ձևով:

- գույքի նկատմամբ անձի իշխանությամբ,

- անձանց միջև հարաբերություններ այն իմաստով, որ սեփականատերը իրավունք ունի հեռացնել ցանկացած անձի ներգործությունը իր գույքի նկատմամբ:<sup>14</sup>

Վ. Պ. Գրիգորյանի կարծիքով, սեփականության իրավունքը, ինչպես և մյուս գույքային իրավունքները, կրում է երկակի բնույթ: Այն իրենցից ներկայացնում է առաջին հերթին սեփականատիրոջ հարաբերությունն իրեն պատկանող գույքի նկատմամբ, իսկ երկրորդ հերթին՝ սեփականատիրոջ և մյուս անձանց միջև հարաբերություններ, որոնք ծագել են այդ գույքի կապակցությամբ: Նրա կարծիքով, գույքային հարաբերությունների այդային երկակի բնույթն ունի սկզբունքային նշանակություն:<sup>15</sup>

Ս. Ս. Ալեքսեևի կարծիքով, իրավունքը դասվում է քաղաքակրթության և մշակույթի այն երևույթների բվին, որոնց զարգացման և կատարելագործման հետ մեկտեղ սահմանափակում է պետական իշխանությունը: Իրավունքը հանդես է գալիս որպես օրինաչափ և



ոչ օրինաշափ վարքագծի շափանիշ:<sup>16</sup>

Այսուամենայնիվ, պեսական իշխանության սահմանափակումը չափեռ է դիտել որպես բացարձակ բարիք: Պետական իշխանությունը պետք է լինի ուժեղ, ընդունակ հուսալիորեն ապահովի և պաշտպանել իր քաղաքացիների իրավունքները: Սեփականության իրավունքի ինստիտուտը հանդիսանում է մասնավոր սեփականության կենտրոնական ինստիտուտը: Նրա նորմերը այսպես թե այնպես ազրեցույթում են գործում ընտանելական, ժառանգական, պարտավորական իրավունքների վրա: Քաղաքացիական իրավունքի սահմաններում սեփականության իրավունքի ինստիտուտը գտնվում է փոխադարձ կապի մեջ պարտավորական իրավունքի ինստիտուտի նորմերի հետ: Ի տարբերություն տիրապետման և օգտագործման իրավագործությունների, տնօրինման իրավագործությունների անհնար է իրականացնել առանց մտնելու պարտավորական հարաբերությունների մեջ, եթե խոսքը վերաբերում է վաճառքի, նվիրելու կամ այլ անձի գույք հանձնելու եղանակների մասին: Այսպիսով, տնօրինման իրավագործությունը կազմում է սեփականության հարաբերությունների դիմանմիկան:

Սեփականության իրավունքի սուբյեկտներ հանդիսանում են քաղաքացիները, իրավաբանական անձինք, պետությունը և համայնքները: Սեփականության օրինակ է համարվում սեփականատիրոջը պատկանող գույքը:

Ծովայական հարաբերությունների գարգաղումը նպաստել է սեփականության իրավունքի համակարգի զարգացմանը: Մ. Ի. Կուլագինը առանձնացնում է այդ գործընթացի երեք ուղղություններ:

- գույքի տարրեր տեսակի ի հայտ գալը,

- անշարժ գույքի սեփականության հարաբերությունների իրավական կարգավորման կենտրոնական ծանրաբեռնվածության տեղափոխումը շարժականի,

- որպես սեփականության իրավունքի օրինակ ավելի հաճախ սկսել են հանդես գալ ոչ թե առանձին իրեր կամ իրավունքներ, այլ դրանց ամբողջությունը՝ համախմբված տն-

տեսական կամ այլ նշանակությամբ:<sup>17</sup>

Նշված ուղղությունները սեփականության իրավունքի ինստիտուտի զարգացման մեջ գրավում են որոշակի տեղ, քանի որ սեփականության նոր օրյեկտների ի հայտ գալը իրավաբաններից պահանջում է իրավական կարգավորմանը համապատասխան մեխանիզմների մշակում:

Ուստական օրենսդրության մեջ մասնավոր սեփականության առաջացումը, ներգրավելով քաղաքացիական շրջանառության մեջ հողամասերը, շենքերը, շինությունները և մյուս անշարժ օբյեկտները, պրակտիկայի առջև դնում են մի շարք հարցեր, որոնք տեսական մեկնաբանման կարիք ունեն: Սեփականության իրավունքի բնութագրման համար օգտագործվում է այնպիսի պետա-իրավական եզրույթ, ինչպիսին է՝ «իշխանություն» եզրույթը: Իշխանության տակ, Յու. Ա. Դմիտրիսը առաջարկում է հասկանալ գույքը տիրապետող սուբյեկտի իրական հնարավորությունը իշխանական ներգործության օրյեկտը տանել դեպի ինչ-որ նոր, նախօրոք որոշված և ծրագրավորված վիճակ:<sup>18</sup> «Իշխանություն» կատագորիան շպետը է դիտել միայն որպես հանրային-իրավական եզրույթ: Իրավունքի մյուս սուբյեկտներից սեփականատիրության հիմնական տարբերությունը կայանում է նրանում, որ սեփականատերը սեփականության իրավունքի օրյեկտների սահմաններում օժտված է ինքնուրույն և բացառիկ իշխանությամբ:

Դեռևս 20-րդ դարի սկզբներին Անտոն Մենգերը գրել է, որ մասնավոր սեփականության իրավունքի բովանդակության աստիճանաբար մեղացումն իրենից մերկայացնում է օրենսդրական աշխատանքի արյունը, որը տևում է երկու հարյուր տարուց ոչ ավել:<sup>19</sup> Ո-Դ քաղաքացիական օրենսդրության մեջ ամրագրված սեփականության իրավունքի հասկացությունը համեմատելով եվրոպական մյուս երկրների քաղաքացիական օրենսդրության հետ՝ տեսմում ենք, որ այն սեփականատիրոջ համար սահմանում է քիչ սահմանափակումներ: Ի տարբերություն դրա, 1896թ. Գերմանիայի քաղաքացիական օրենսգրքում



## ԼՂՀ դատական իշխանություն

նշված է, որ գույքի սեփականատերը կարող է, քանի դեռ դա չի հակասում օրենքին կամ երրորդ անձանց իրավունքներին, իր հայեցողությամբ տնօրինել իրեն պատկանող գույքը և հեռացնել ցանկացած անձի ներգործություն իրեն պատկանող գույքի նկատմամբ: 1907թ. Ըվեյցարիայի քաղաքացիական օրենսգրքում ամրագրված է, որ գույքի սեփականատերը իրավունք ունի իրավակարգի սահմաններում իր հայեցողությամբ տնօրինել իրեն պատկանող գույքը:

Այսպիսով, սեփականության իրավունքի ինստիտուտը կազմում է պետական իշխանության նյութական իհմքը, մասնավորապես, դրան հաղորդում է իրավական, քաղաքական և սոցիալական կայունություն և ինքնավարություն, հանդիսանում է շուկայական հարաբերությունների ձևավորման հիմնաքարը և պետության տնտեսական և սոցիալական ֆունկցիաների իրականացման առաջնային ուղղությունը:

1. Гегель Г. В., Философия права., Введение.—М., 1990., — С. 100.
2. Суханов Е. А., Лекции о праве собственности., М.:Юрид. Лит., 1991.,—С. 6.
3. Локк Д., Избранные философские произведения., М. , 1960., Т. 2., С. 8.
4. Конституционное (государственное) право зарубежных стран., Учебник. В 4-х томах., Тома 1-2., Отв. Ред. Б. А. Страшун.,— М. : Изд-во БЕК, 1995., С.149.
5. Гордли Дж., Маттие У. Защита владения //44 Американский журнал сравнительного правоведения. 1996., С. 293.
6. Бербешкина З. А., Справедливость как социально-философская категория. — М., 1983., С. 54.
7. Чичерин Б. Н., Курс государственной науки., — Ч. 1., — М. , 1984., С. 208.
8. Гражданское право России., Часть первая: Учебник / Под ред. З. И. Цыбуленко — М. , Юристъ, 1998. — С. 258.
9. Павлов В. П., Некоторые вопросы теории гражданских правоотношений в части первой нового гражданского кодекса

Российской Федерации // Сборник научных трудов, посвященный памяти В. А. Рясенцева /Московская государственная юридическая академия. Отв. Редакторы: А. Г. Калпин, А. И. Масляев, В. В. Долинская. — М. : Юрист, 1995 г. — С. 45.

10. Маркс К. , Энгельс Ф., Соч. — Т. 12., — С. 713-714; Т. 46. — С. 471-485.

11. Суханов Е. А., Указ. Работа. — С. 10.

12. Комментарий к ГК РСФСР, 2-е издание, дополненное и переработанное, "Юридическая литература," М., 1970., С. 130.

13. Васьковский.Учебник гражданского права., 11.СПб., 1896., С. 83.

14. Синайский В. И., Русское гражданское право., Выпуск1., Общая часть и вещное право., Киев., 1914 г. С. 216.

15. Гражданское право России., в 2-х томах., Том 1., Учебник /Под. ред. Е.А.Суханова. —М.: Издательство БЕК, 1993.—С. 18.

16. Алексеев С. С, Право: время новых подходов // Советское государство и право., 1991, N 9, С. 6-7, см. также Нерсесянц В. С., Право и закон, М., 1983.С. 351-359.

17. Кулагин М. И, Избранные труды, М.: Статут (в серии "Классика российской цивилистики"), 1997, С. 251.

18. Дмитриев Ю. А., Концепция народовластия в современной России (государственно-правовые проблемы теории и практики), Автотеф. дисс. ...докт. юрид. Гаук., М. , 1994, С. 17.

19. Гражданское право и неумущие классы населения., Соч. Антона Менгера С.- Петербург, 1903 г. —С. 125.